



ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ՝
ԲՆԱԴԱՆՈՒԹՅԱՆ
ՆԱԽԱՐԱՐ

Է. ԳՐԻԳՈՐՅԱՆ

«01» 04 2019թ

ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱԿԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ
ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ

ԲՓ 16

Ձեռնարկողը՝

«Արտքոմֆանի» ՍՊԸ
Ք. Երևան, Պոռչյան 2/1, 18

Գործունեությունը՝

Երևան քաղաքի Մանիկոնյանց 58/5 հասցեում բնակելի
շենքերի կառուցման շրջակա միջավայրի վրա ազդեցության
նախնական գնահատման հայտ

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության
փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի
տնօրենի ժ/պ՝



Ա. Դնոյան

ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ
ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ

թիվ ԲՓ 16

<01> 04 2019թ.

**Երևան քաղաքի Արաբկիր վարչական շրջանի Մամիկոնյանց
58/5 հասցեում բնակելի շենքերի կառուցման շրջակա միջավայրի
վրա ազդեցության նախնական գնահատման հայտ**

Ձեռնարկող՝

«Արտքոմփանի» ՍՊԸ

Փաստաթղթի տեսակը՝

Շրջակա միջավայրի վրա ազդեցության
նախնական գնահատման հայտ
/Գ կատեգորիա/

Տեղադրման վայրը՝

ք. Երևան Արաբկիր վարչական շրջան

Նախատեսվող գործունեության նպատակն է Երևան քաղաքի Արաբկիր վարչական շրջանի Մամիկոնյանց 58/5 հասցեում /Նախկին Գրիբոյեդովի փողոց, հ.17 հողամաս/ հատկացված հողատարածքում կառուցել բնակելի շենքեր: Նախագծման համար Երևանի քաղաքապետարանի կողմից տրվել է 02.03.2018թ. N01/18-07/1-Ու-165-882 նախագծման թույլտվությունը (ճարտարապետահատակագծային առաջադրանք): Համաձայն կառուցապատման նախագծի նախատեսված է կառուցել 14 վերգետնյա, մեկ ստորգետնյա հարկերով բազմաբնակարան բնակելի 3 շենքեր և շենքերի միջև ստորգետնյա 1 ավտոհանգրվանային հարկ: Գործունեությունն իրականացվելու է բնակավայրերի, հասարակական կառուցապատման նպատակային և գործառնական նշանակության գոտում՝ անշարժ գույքի նկատմամբ սեփականություն հանդիսացող՝ N 18032019-01-0176 վկայականով ամրագրված հողամասում /հողամասը պատկանում է «Արտքոմփանի» ՍՊ ընկերությանը/:

Դիտարկվող տարածքը կառուցապատված է, չի առնչվում Արաբկիր վարչական շրջանում գոյություն ունեցող պահպանության ենթակա մշակութային հուշարձանների, կամ կենսաբազմազանության տեսակների հետ: Տարածքում առկա դեկորատիվ ծառատեսակները շինարարության ընթացքում պահպանվելու են:

Հողամասի ընդհանուր մակերեսը կազմում է 11330.0մ², որտեղ առկա կիսաքանդ կառույցը ենթակա է քանդման: Կառուցապատման ընդհանուր մակերեսը կազմում է 2047մ²: Հողամասին կից առկա են ինժեներական գծերը և հաղորդակցողիներ:

Բնակելի համալիրը կազմված է լինելու երեք միմիանց նկատմամբ շախմատածև դասավորված կետային, սեկցիոն տիպի բարձրահարկ բնակելի շենքերից (14 Հարկ), մեկ ստորգետնյա ավտոկայանատաղիից (63 մեքենաների համար), էլ ենթակայանից, շարժական պահակակետից (թեթեվ կոնստրուկցիաներով հավաքված) և ստորգետնյա ավտոկայանատաղիում ներկառուցված պոմպակայանից: Երեք շենքերը միավորված են

համատեղ ստորագետնյա ավտոկայանատեղիներով: Բնակելի համալիրում բնակիչների և հյուրերի համար նախագծված են բացօթյա ավտոկայանատեղեր, զբոսայգի, առանձին կանաչապատ տարածքներ և հանգստի գոտիներ: Հանգստի գոտիները նախատեսված են ինչպես ակտիվ հանգստի համար (երկու ավազածածկ մանկական խաղահրապապակներ, երկու մարզադաշտեր, երկու մարզահրապարակներ), այնպես էլ պասիվ հանգստի համար (2 զրուցարաններ): Բնակելի շենքերի դասավորությունը պայմանավորված է եղել հողամասի բնական լուսավորության հաշվարկներով, ինչպես նաև գոյություն ունեցող ծառերը հնարավորինս պահպանելու ցանկությամբ:

Շենքերի առաջին հարկերը նախատեսված են հասարակական նշանակության օգտագործման համար: Շքամուտքերն առանձնացված են հասարակական նշանակության սենքերից: Բոլոր մուտքերն ապահովված են թեքուղիներով: Բնակելի հարկերը բաղկացած են լինելու երկու՝ 4 սենյականոց, երկու՝ 3 սենյականոց և երեք՝ 2 սենյականոց բնակարաններից; Յուրաքանչյուր շենքում վերելակները երկուսն են՝ 400կգ և 1000կգ /որը նախատեսված է հրշեջ ստորաբաժանում տեղափոխելու համար/ բեռնաբարձություններով:

Պատերն իրականացվելու են պեմզաբլոկներով, արտաքինից երեսապատումը՝ բազալտե և տուֆե սալերով: Տանիքը նախատեսված է կազմակերպված ջրահեռացումով: Շենքերի սեյսմազինվածության մակարդակը նախատեսված է սեյսմիկ՝ III գոտու համար (9 Բալ և ավելի):

Նախագծով կառուցում նախատեսված է նաև հաշմանդամ և բնակչության սակավաշարժ խմբերի համար տեղաշարժվելու անհրաժեշտ պայմաններ, ինչպես նաև արտակարգ իրավիճակներում մարդկանց և օբյեկտների պաշտպանության համապատասխան միջոցառումներ:

Բնակելի համալիրի ջրամիացումը և ջրահեռացումն իրականացվելու է «Վեոլիա Ջուր» ՓԲԸ կողմից տրված ջրամիացման և ջրահեռացման նախագծման թիվ է < 4177 տեխնիկական պայմաններին համապատասխան՝ նախագծված տարածքի հարևանությամբ, Արդրության փողոցով անցնող 400 մմ տրամագծի ջրագծից: Ջրահեռացման միացման կետը Մամիկոնյանց փողոցով անցնող 700 մմ տրամագծի գործող կոյուղագիծն է: Նախագծով նախատեսվում է կենցաղային ջրօգտագործման և հրդեհաշիջման միասնական համակարգ: Տարածքից մակերևութային ջրերի հեռացումը կատարվելու է կազմակերպված եղանակով՝ հեղեղատար կոյուղու համակարգի միջոցով:

Նախագծով, շինարարական աշխատանքների ավարտից հետո նախատեսված է կառուցապատումից ազատ, մոտ 2713.4 մ² մակերեսով տարածքը սալապատման տեսքով բարեկարգել, իսկ ընդհանուր հողամասի 34%-ը /մոտ 3817.0 մ² մակերես/ կանաչապատել սիզամարգի և ծառատունկի տեսքով:

Շինարարության ժամանակահատվածը հաշվարկված է 33 ամիս, որից 1 ամիսը նախապատրաստական փուլինն է: Նախապատրաստական աշխատանքները ներառում են՝ տարածքով անցնող ինժեներական կոմունիկացիաների անցումն, կամ տեղափոխման վերաբերյալ թույլտվությունների ձեռք բերումը, շինարարական կազմակերպումը՝ ցանկապատով և այլ անհրաժեշտ ենթակառուցվածքներով, տարածքի մաքրումը շինարարական աղբից /գոյություն ունեցող կիսաբան շինությունից կառաջանա 2մ³ շին աղբ/ ապամոնտաժված տարրերից:



Շինարարական աշխատանքների ընթացքում որպես առաջնահերթ, տարածքում գործող քաղաքային ցանցերից իրականացվելու են ջրամատակարարման և ջրահեռացման միացումները: Ջուրը հիմնականում օգտագործվելու է շինհրապարակի ջրցանման, մաքրման և որոշ շինարարական աշխատանքների իրականացման համար, ինչպես նաև կապալառուի աշխատակազմի կենցաղային կարիքները հոգալու նպատակով:

Շինարարական աշխատանքներն իրականացվելու են ըստ ժամանակացույցի և օրացույցային գրաֆիկի: Շինարարական հրապարակում չի նախատեսվում շինանյութերի, կամ սորուն նյութերի պահեստներ: Ապրանքային բետոնը շին.հրապարակ է բերվելու բետոնա-շաղախային հանգույցից՝ պատրաստի վիճակում:

Նոր կառուցվող շենքերի շինարարության ընթացքում շրջակա միջավայրի վրա ազդեցությունները և ռիսկերը հիմնականում պայմանավորված են շինարարական աշխատանքների ընթացքում անօրգանական փոշու և ծխազագերի ժամանակավոր արտանետումներով, որոնք առաջանում են առկա շինության քանդման, նոր շենքերի կառուցման հողային աշխատանքներից և տեխնիկական միջոցների աշխատանքից՝ դիզվառելիքի աշխատանքի արդյունքում: Հողային աշխատանքների ժամանակ մշակվող գրունտի ծավալը կկազմի՝ 12556մ³:

Գումարային փոշու արտանետումները հաշվարկվել են՝ 13.07 տ/շին.ժամանակահատված: Շինարարության ընթացքում օդային ավազանը աղտոտումից պահպանելու համար նախատեսված են միջոցառումներ, այդ թվում՝ շինհրապարակի ջրցանում, շինանյութ տեղափոխող մեքենաների թափքի ծածկում, շինհրապարակի ծածկում համապատասխան բարձրությամբ թաղանթով, շին հրապարակ մուտք գործող և դուրս եկող մեքենաների անվադողերի լվացում, շինարարական տեխնիկայի և փոխադրամիջոցների տեխնիկական վիճակի ստուգում և կարգաբերում:

Շինարարության ընթացքում, հարակից տարածքներում աղմուկի մակարդակի նվազեցման միջոցառումները ներառում են շինարարական աշխատանքների և տրանսպորտի տեղաշարժի ցերեկային ժամերին կազմակերպում, աղմկահարույց մեքենաների և սարքավորումների օգտագործումից խուսափում, կամ խլացուցիչների տեղադրում, տեխնիկական միջոցների պարբերաբար ստուգում և կարգաբերում:

Նախատեսվել են նաև միջոցառումներ, որոնք ուղղված են շինարարության ընթացքում աշխատողների առողջությանը և աշխատանքային անվտանգությանը, հնարավոր սոցիալական ազդեցություններից խուսափելուն կամ մեղմելուն: Միջոցառումները ներառում են՝ աշխատանքների և հնարավոր ազդեցությունների վերաբերյալ մոտակա բնակչության իրազեկումը /պատճառված անհանգստություն, երթևեկության ծանրաբեռնվածություն, փոշու քանակների ավելացում և այլն/, շինարարական աշխատանքների և բեռնատար մեքենաների համար ժամանակացույցի մշակումը, համապատասխան ցուցանակների տեղադրումը, ժամանակավոր անցուղիների նախատեսումը և այլն:

Շրջակա տարածքներն աղտոտումից և պատահական թափվածքներից զերծ պահելու նպատակով շինհրապարակում շինարարական նյութերի և քսայուղերի



ժամանակավոր պահեստները տեղադրվելու են բետոնապատ մակերեսի վրա, որն ապահովված կլինի հոսակորուստների հավաքման համակարգով:

Հիմնական թափոնատեսակը, որը կառաջանա ինչպես առկա շենքի քանդման, այնպես էլ նոր բնակելի շենքերի կառուցման աշխատանքներից, դա շինարարական աղբն է: Առաջացող թափոնների տեղափոխությունն ու տեղադրումը կիրականացվի երևանի քաղաքապետարանի հետ համաձայնեցված, սահմանված աղբավայրերում:

Նախատեսվող գործունեության ընթացքում (նախագծում, շինարարություն, շահագործում) կանխատեսվող անցանկալի, բացասական ազդեցությունները կանխարգելիչ և մեղմացնող միջոցառումները ներառված են ԲԿՊ-ում և իրականացվելու են կապալառու կազմակերպության կողմից:

ԲԿՊ-ում նախանշված մեղմացնող միջոցառումների կատարումը և դրանց արդյունավետությունը ստուգելու նպատակով կառուցապատողի կողմից կիրականացվի կանոնավոր մոնիթորինգ՝ ստուգելու համար շինարարական աշխատանքների իրականացման ընթացքի և բնապահպանական միջոցառումների համապատասխանությունը պլանավորված մեղմացնող միջոցառումներին:

Նախագծով նախատեսված կանաչապատման աշխատանքների համար անհրաժեշտ կլինի նոր բուսահողի լիցք, քանի որ տարածքը կառուցապատված է, հողային աշխատանքները բուսահող չի առաջանա: Բուսահողի ձեռքբերումը, տեղափոխումը և օգտագործումը կիրականացվի ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով: Կանաչապատումը ներառում է՝ սիզամարգի տեսքով աշխատանքներ և ծառատունկ: Նշված աշխատանքներն իրականացվելու են երևանի քաղաքապետարանի հետ համաձայնեցված՝ տարածքի համար մշակված դենդրոնախագծին համաձայն: Դեկորատիվ տեսք ապահովելու նպատակով կանաչապատման համար օգտագործվելու է՝ թույա ոսկեգույն, թույա սյունաձև, հացենի գնդաձև ակացիա, կաղնի, թղկի, փովող գիհի և այլ ծառատեսակներ, որոնք հարմար են երևանյան լանդշաֆտին և բնակլիմայական պայմաններին: Ծառերի կպչողականությունն ապահովվելու է պարտադիր ոռոգման և խնամքի պայմաններում: Ոռոգումն իրականացվելու է նախագծվող ոռոգման ցանցի միջոցով՝ պահանջվող ջրաքանակին համապատասխան: Նախագծված տարածքի կանաչապատման ընդհանուր ծախսերը /ներառյալ տնկվող ծառատեսակներ և խոտի սերմ/ գնահատվել են 4.965000 ՀՀ դրամ:

Նախնական գնահատման և փորձաքննության փուլերում, ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով երևան քաղաքում անցկացված հանրային քննարկումներում գործունեության իրականացումը մասնակիցների կողմից արժանացավ հավանության:

Ամփոփելով հայտի բնապահպանական և սոցիալական ազդեցությունների վերլուծությունները, կարելի է եզրահանգել, որ ծրագրի իրականացման արդյունքում շրջակա միջավայրի վրա հնարավոր բացասական ազդեցությունները հիմնականում պայմանավորված կլինեն շինարարական աշխատանքների իրականացմամբ, որոնք կկրեն ժամանակավոր բնույթ, ազդեցությունները կլինեն թույլատրելի ստորմայի սահմաններում:



Փորձաքննական պահանջ

Շինարարության ընթացքում անհրաժեշտ է պահպանել ԲԿՊ-ում և բնապահպանական մոնիթորինգի պլանում առաջարկվող միջոցառումների իրականացումը և ժամանակացույցերը, որոնց արդյունքները պետք է հասանելի լինեն պետական շահագրգիռ մարմիններին և հանրությանը:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

«Արտքոմփանի» ՍՊԸ կողմից ներկայացված Երևան քաղաքի Արաբկիր վարչական շրջանի Մամիկոնյանց 58/5 հասցեում բնակելի շենքերի կառուցման շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտի վերաբերյալ տրվում է դրական եզրակացություն՝ փորձաքննական պահանջի պարտադիր կատարման պայմանով:

Տնօրենի տեղակալ

Գլխ.մասնագետ՝



Ա. Դոնոյան

Հ. Մկրտչյան